ԱՐՑԱԽ. մարդիկ, գործեր, իրավիճակ

Հարցազրույց ԼՂԻՄ-ի Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ հետ

Մեր հանդիպումը կուսակցության Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտունու շրջանային կոմիտեի առաջին քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Վաչագան Սամսոնի Գրիգորյանի հետ տեղի ունեցավ ապրիլի 29-ին, շաբաթ օրը, ուշ երեկոյան, Ստեփանակերտի իր բնակարանում։ Ընդհատված հարցազրույցը շարունակվեց Երևանում, մայիսի 5-ին։

— Ընկեր Գրիգորյան, նախ՝ «Երեկոյան Երևան» թերթի բազմահազար ընթերցողների անունից թույլ տվեք շնորհավորել Ձեզ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ ընտրվելու առթիվ։ Խնդրում եմ պատմել Լեռնային Ղարաբաղում ընտրությունների անցկացման ու նրա արդյունքների մասին, առավել ևս, որ մասսայական ինֆորմացիայի միջոցները, առաջին հերթին մամուլը, հանգամանորեն չեն անդրադարձել այդ խնդրին։

— Շնորհակալություն։ Հենց սկզբից նշեմ, որ եթե մինչև ներկա ընտրությունները դեպուտատության թեկնածուներ էին առաջադրվում (իսկ հետո նաև «միաձայն ընտրվում» դեպուտատներ) զուտ անձնական տվյալների, ընտանեկան կացության լավ բնութագրի շնորհիվ, ապա ներկա ընտրությունների առավելությունը կայանում է նրանում, որ առաջին պլան մղվեց առաջադրված դեպուտատության թեկնածուի հասարակական-քաղաքական գործունեությունը, այն, թե որչափով է այդ գործունեությունը ծառայում իր ժողովրդի շահերին։ Դա ԽՄԿԿ Կենտկոմի ապրիլյան (1985 թ.) պլենումում և ԽՄԿԿ XXVII համագումարում կուսակցության հռչակած վերակառուցման, հրապարակայնության և հասարակության դեմոկրատացման կուրսի ուղղակի արտահայտությունն է։ Ընտրություններին առաջին անգամ ժողովուրդն առաջադրում է և ընտրում նրան, ում ցանկանում է։ Լեռնային Ղարաբաղում ընտրություններին մասնակցել է ընտրողների ընդհանուր թվի 94,5 տոկոսը։

Դեպուտատության թեկնածուներ հիմնականում առաջադրվել էին ժողովրդի կողմից հարգանք վայելող և վստահություն ունեցող մարդիկ, որոնցից առավել արժանիներն ընտրվել են ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ (նրանք, ովքեր մտահոգված են Լեռնային Ղարաբաղի ներկա ծանր ճակատագրով և նրա պրոբլեմի քաղաքական, ոչ թե վարչական լուծման կողմնակիցներ են)։

Հատուկ կառավարման ձևը որևէ կերպ չի ազդել ընտրությունների վերջնական արդյունքի վրա։ Ընտրությունները Լեռնային Ղարաբաղում անցկացվեցին քաղաքական պատշաճ մակարդակով, մեր պետական համակարգին, օրինականության ու սահմանադրական հիմունքներին համապատասխան։

Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ են ընտրվել Հենրիկ Պողոսյանը (Ստեփանակերտի ազգային-տերիտորիալ ընտրական օկրուգ), Զորի Բալայանը (Ասկերան), Վաչագան Գրիգորյանը (Մարտունի, Հադրութ), Վահան Գաբրիելյանը (Մարտակերտ), Բորիս Դադամյանը (ԼՂԻՄ տերիտորիալ ընտրական օկրուգ)։ Բացի այս 5 դեպուտատներից, դեպուտատ է ընտրվել նաև Ջաֆարովը Շուշվա ազգային-տերիտորիալ ընտրական օկրուգից և Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Ի. Վոլսկին (ԼՂԻՄ-ն ու նրան հարող 4 ադրբեջանական շրջանները միավորող տերիտորիալ ընտրական օկրուգ)։

— Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն ինչպե՞ս ընդունեց մարզում կառավարման հատուկ ձև մտցնելը։

— Այս տարվա հունվարի 20-ից, երբ մարզում սահմանվեց կառավարման հատուկ ձև, մարզի բնակչությունը հենց սկզբից ըմբռնումով վերաբերվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության այդ որոշմանը։ Ես սա ասում եմ՝ նկատի առնելով մարդկանց այն հավատն ու վստահությունը, որ Հատուկ կառավարման կոմիտեն անաչառ կերպով, մանրազնին քննության կենթարկեր մարզում ստեղծված ծանր իրավիճակը, դրա ծնող պատճառները և իր աշխատանքով մեծապես կնպաստեր Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման ու քաղաքական կայուն վիճակի սահմանմանը, քանի որ դրան հասնելու բոլոր անհրաժեշտ պայմանները Գերագույն խորհրդի հայտնի որոշման մեջ կետ առ կետ նշված էին։ Եթե ընդհանրացնելու լինենք՝ դա նշանակում է ԼՂԻՄ-ի տնտեսական ինքնուրույնություն, վարչական և իրավապահպան մարմինների ենթարկում կենտրոնական մարմիններին, Հայկական ԽՍՀ-ի հետ մշակութային, գիտական կապերի հաստատում և ամրապնդում, Հայաստանի կողմից կադրային ամեն կարգի օգնություն ԼՂԻՄ-ին։ Սա, անտարակույս, կնշանակեր որոշակի առաջխաղացում ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման ուղղությամբ։

Սակայն անցած շուրջ չորս ամիսների ընթացքում համարյա ոչինչ չի կատարվել։

Նախորդ տասնամյակներում կատարված բոլոր սխալներն ու բացթողումները այսօր իներցիայով շարունակվում են։ Ընդ որում, Հատուկ կառավարման կոմիտեն մարզի թե՛ քաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական զարգացմանն առնչվող հարցերը համաձայնեցնում է Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարության և անձամբ Ա. Վեզիրովի հետ, մի բան, որի անհրաժեշտության մասին խոսք չկա Գերագույն խորհրդի վերոհիշյալ որոշման մեջ։ Ինչպե՞ս հասկանալ, որ մարզի ադրբեջանաբնակ գյուղերում (Խոջալու, Մալիբեյլի, Կրկժան և այլն) տեղադրում են հարյուրավոր ֆիննական տնակներ, բացվում են աշխատանքի օբյեկտներ, նորանոր արտադրամասեր (ընդ որում՝ արտադրամասերում աշխատողների թիվը նախատեսվում է կրկնակի ավելին, քան բուն տվյալ գյուղի բնակիչների թիվն է), կենցաղի տներ, շահագործման են հանձնում ասֆալտապատ ճանապարհներ, իսկ հայկական գյուղերում ըստ էության քարը քարին չի դրվում։ Առայսօր ոչ մի աշխատանք չի կատարվել ԼՂԻՄ-ի որևէ հայկական գյուղում կամ շրջկենտրոնում սոցիալական, տնտեսական, կենցաղային, մշակութային պայմանների բարելավման ուղղությամբ, չի կառուցվել որևէ օբյեկտ։ Ինչպե՞ս հասկանալ, որ Ասկերանի շրջկենտրոնում չկա հիվանդանոց, իսկ հարևան Խոջալուում կառուցվում է և շուտով շահագործման է հանձնվելու ավելի քան 50 տեղանոց հիվանդանոցի շենքը։ Մարտունի քաղաքի 350 երիտասարդներ անգործ են, մարզի խոշորագույն գյուղի՝ Ճարտարի երիտասարդության 40 տոկոսը չունի մշտական աշխատանք։ Իսկ ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի կողմից հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված 400 միլիոն ռուբլուց առայժմ ոչինչ չի ներդրվել այդ ուղղությամբ։

Ինչպես հայտնի է, Հատուկ կառավարման կոմիտեի գործունեությամբ այսօր վերացված են մարզկոմն ու մարզխորհուրդը (այսինքն՝ մարզի ինքնավարությունը)։ Իմ խորին համոզմամբ՝ ներկայիս իրադրությունը պահանջում է, որ անհապաղ վերականգնվեն մարզկոմի ու մարզխորհրդի ֆունկցիաները։

Այսքանից հետո մի՞թե պարզից էլ պարզ չէ, որ մարզում ո՛չնչով չի փոխվել նախկին իրավիճակը։ Սա ինքնին վկայում է, որ Լեռնային Ղարաբաղում առանց հարցի քաղաքական լուծման (ասել է՝ առանց ԼՂԻՄ-ի Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու) հնարավոր չէ սոցիալ-տնտեսական միջոցառումների լայնամասշտաբ իրականացում։

Ներկայումս մարզի բնակչության իղձերը առավել ցայտունորեն են ներկայացված ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահ Մ. Ս. Գորբաչովին ուղղված այն նամակի մեջ, որը տպագրել է «Խորհրդային Ղարաբաղ» թերթը մայիսի 5-ին և որի տակ ստորագրել են կուսշրջկոմների առաջին քարտուղարները ու շրջխորհուրդների գործկոմների նախագահները, Ստեփանակերտի կուսքաղկոմի առաջին քարտուղարն ու քաղխորհրդի գործկոմի նախագահը, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներն ու Հատուկ կառավարման կոմիտեի հայ անդամները (Թվով տասնչորս մարդ)։

Այլ կերպ չի կարելի. մինչև ե՞րբ կարելի է անտեսել ժողովրդի հոգեկան և ֆիզիկական տվայտանքները, նրա արդարացի պահանջը... Նման պահանջ առաջադրել՝ մի՞թե նշանակում է հանցագործություն կամ մեղք գործել։

— Մարզային և շրջանային կուսակցական կազմակերպությունները ո՞ր վերադաս կուսակցական մարմնին են ենթարկվում։

— Կուսակցական ենթակայության վերաբերյալ առայսօր որևէ որոշում չի ընդունվել, թեպետ անցյալ տարվա աշնանը տեղի են ունեցել մարզի չորս շրջանային կոմիտեների պլենումները, դրան հետևել է մարզային կոմիտեի պլենումը, որը արտահայտելով մարզի կոմունիստների բացարձակ մեծամասնության կամքը, մարզային կուսակցական կազմակերպությունը հռչակել է Ադրբեջանական ԽՍՀ կոմունիստական կուսակցության կազմից դուրս եկած։ Զարմանալի անտարբերությամբ այս փաստը լռության է մատնվել, և այժմ էլ շրջանային կոմիտեները կոչվում են Ադրբեջանի կոմկուսի Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի և Հադրութի շրջկոմներ...

— Ի՞նչ կոնկրետ աշխատանքներ են կատարվում Ադրբեջանի տարբեր վայրերից Լեռնային Ղարաբաղում վերահաստատված հայ գաղթականների (այսինքն՝ նախկին ղարաբաղցիների) աշխատանքի տեղավորման և նրանց բնակարաններով ապահովելու ուղղությամբ։

— Սումգայիթյան եղեռնագործությունից, ապա և Բաքվում, Կիրովաբադում հայ ժողովրդի հանդեպ կատարված գազանություններից հետո Ադրբեջանի տարբեր վայրերից սկսվեց հազարավոր հայերի հոսք դեպի Լեռնային Ղարաբաղ։ Դրանք մեծ մասամբ այն ղարաբաղցիներն են, որոնք տասնամյակներ առաջ քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային, ամենատարրական մարդկային նորմերի բացակայության պատճառով ստիպված թողել էին իրենց հայրենի օջախները։ Այսօրվա տվյալներով ԼՂԻՄ-ում վերահաստատվել են շուրջ 20 հազար հայեր, որոնց մեծ մասը ապրում է Ստեփանակերտում։ Պետք է արժանին հատուցել այն մարդկանց, ովքեր մեծապես նպաստել են մարզում հազարավոր հայերի վերաբնակեցմանը, ընդհանրապես՝ Հայկական ԽՍՀ-ի բնակչությանը, որոնց ցույց տված նյութական և ֆինանսական որոշակի օգնության շնորհիվ վերաբնակյալների մի մասը Լեռնային Ղարաբաղում ձեռնամուխ է եղել շենքերի կառուցման աշխատանքներին կամ էլ վերանորոգում տարիներ առաջ լքված հայրական օջախները։ Նման օգնություն ցույց են տվել նաև մեզ մոտ, և դա շարունակվում է ցայսօր։

Սակայն վերաբնակյալներն առայժմ ապահովված չեն աշխատանքով և շատ հաճախ՝ նաև բնակարաններով։

Վերջերս մամուլում և հեռուստատեսությամբ խոսք գնաց այն մասին, որ Ստեփանակերտում հնարավոր չէ նրանց բնակարաններով ապահովել, վերաբնակյալներին սպասում են շրջկենտրոններն ու գյուղերը։ Եկեք մինչև վերջ անկեղծ լինենք։ Մի՞թե առայսօր թե՛ Ստեփանակերտում, թե՛ շրջկենտրոններում ու գյուղերում կառուցվել է որևէ արտադրական օբյեկտ կամ բնակելի շենք վերաբնակյալների համար (բացառությամբ ֆիննական տնակների)։ Շրջկենտրոններն ու գյուղերն իրենք ունեն բնակարանային և արտադրական օբյեկտների կառուցման մեծ, անբուժելի վերքեր։ Այսպես, Մարտունիում վերջին տասնմեկ տարվա ընթացքում շահագործման չի հանձնվել ոչ մի բնակելի շենք։ Պատկերը նույնն է նաև մյուս վայրերում։

— Ինչպիսի՞ն է Հայաստանի մասնակցությունը ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացման գործին։ Արդյոք աշխուժացած այդ կապերի մեջ գործնական քայլեր նկատվո՞ւմ են, թե՞ ոչ։

— Դարձյալ պիտի պատասխանեմ միայն անկեղծորեն։ Ինչ վերաբերում է գիտական, կրթական, մշակութային օգնությանը, ապա դա շոշափելի է։ Այսպես, Ստեփանակերտում և մյուս շրջկենտրոններում բացվել ու բացվում են Հայկական ԽՍՀ մշակութային, գիտական հաստատությունների մասնաճյուղեր։ Ապրիլի 27-ին և 28-ին Ստեփանակերտում բարեգործական համերգներով հանդես եկան Հայաստանի արվեստի լավագույն վարպետները՝ կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանի ղեկավարությամբ, որոնց ելույթներն անցան փայլուն հաջողությամբ։ Հոգևոր-մշակութային կապերն առաջիկայում ևս կամրապնդվեն, քանի որ դրանց զարգացման հեռանկարներն արդեն նախանշված են։

Ցավոք սրտի՝ նույնը չի կարելի ասել սոցիալ-տնտեսական կապերի զարգացման մասին, թեև, ճիշտ է, դրան խանգարեց աղետավեր երկրաշարժը։ Առիթից օգտվելով, կկամենայի նշել, որ արցախահայությունը ևս նույն ծանրությամբ բաժանեց հայ ժողովրդի ծանր ողբերգությունը աղետի առաջին օրվանից մինչև այսօր։ Միայն երկու օրվա ընթացքում Մարտունու շրջանի աշխատավորները ցույց տվեցին 2 մլն ռուբլու օգնություն։ Այդ օգնությունը այսուհետ ևս կշարունակվի. ընտանիքում թե՛ ուրախությունը, թե՛ տխրությունը հավասարապես պատկանում են բոլոր անդամներին։

Շարունակեմ ընդհատված թեման։ Մինչև հիմա Հայաստանից եկած գործարանների, հիմնարկ-ձեռնարկությունների տասնյակ ներկայացուցիչների խոսքը գրեթե գործի չի վերածվել։

Բերեմ մի փաստ, Անցյալ տարվանից սկսած մարզում աշխուժացում նկատվեց կոոպերատիվների կազմակերպման բնագավառում։ Մինչև հիմա Հայկական ԽՍՀ-ի կողմից կազմակերպված տասնյակ և տասնյակ կոոպերատիվներից և ոչ մեկը համարյա արտադրանք չի տալիս։ Գյուղ չկա, որ չունենա մեքենայի, էքսկավատորի, տրակտորի, ցեմենտի, թերթաքարի կարիք։ Շահագրգռվածությունը երկուստեք պետք է մեծ լինի։ Գյուղական բնակավայրերն ունեն գյուղատնտեսական, մանկավարժական, բժշկական բարձրորակ մասնագետների, բուժքույրերի խիստ կարիք։ Պայմաններ չկան այնտեղ կլինիկական բուժման համար։ Տասնյակ գյուղերում դպրոցների վիճակը շատ անմխիթար է։ Կարծում եմ, որ Հայկական ԽՍՀ առողջապահության և ժողովրդական կրթության մինիստրությունները կընդառաջեն մեր խնդրանքին և կձեռնարկեն համապատասխան միջոցներ։

Այս առումով բավականին գործնական է այն օգնությունը, որ ցույց է տալիս «Հայգազարդ» միավորումը։ Դեռ անցյալ տարի այդ կազմակերպությունը Ստեփանակերտում շահագործման է հանձնել բնակելի մեկ շենք՝ 50 բնակարանով։ Այս տարի շահագործման կհանձնվի երկու բնակելի շենք ևս։ Բացի դրանից, 18—20 միլիոն ռուբլի է նախատեսել «Հայգազարդը» ավերված Սխտորաշեն պատմական գյուղը վերականգնելու համար։ Ավարտված են Ղարաբաղի շրջանների գազիֆիկացման և գազատար խողովակների անցկացման նախագծահաշվարկային աշխատանքները, և շուտով մարզի բոլոր գյուղերում մուտք կգործի բնական գազը, և մենք՝ ղարաբաղցիներս, հավատում ենք դրան։

— Մամուլում և մասսայական ինֆորմացիայի մյուս միջոցներով հաճախ է ղարաբաղյան շարժումը ներարկվում անհիմն կշտամբանքների, մե՛րթ ներկայացնելով որպես ազգայնական, մե՛րթ նրա մասնակիցների մի մասին մեղադրելով կաշառակերության մեջ, կամ էլ պարզապես անտեսվում է շարժման բուն էությունը։

— Ինչ խոսք, շարժումն առայսօր չի ստացել իր ճշմարիտ գնահատականը։ Ղարաբաղյան շարժումն իր էությամբ խորապես արդարացի է, այն ազգային է, ժողովրդական և որպես այդպիսին սկիզբ է առել մաքուր ակունքներից, և պարզ գետի նման հոսում է իր հունով, իսկ նրան միացող բոլոր պղտոր առուները կկորչեն գետի մեջ։

Ինչպե՞ս կարելի է մի ժողովրդի արդարացի պահանջը (որն արտահայտվել է մարզային խորհրդի վեց նստաշրջանների ընդունած որոշումներում, մարզկոմի երկու պլենումների որոշումներում, արտացոլվել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի որոշման մեջ) հանկարծ վերածել կաշառակերների, ազգայնականների և ծայրահեղականների պահանջի։ Համաձայնեք, մեր ժողովուրդը արժանի չէ դրան։ Իսկ եթե «Կռունկի» կամ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները «կաշառակերներ» են, ապա ովքե՞ր են Ալիևը, Բաղիրովը, Սեյիդովը, Կևորկովը... այն էլ՝ հրապարակայնության մի այսպիսի ժամանակաշրջանում։ Պետք է նաև հասկանալ ժողովրդին, նա ինչպե՞ս կարող է չզայրանալ, երբ իր արդարացի պահանջն անտեսվում է կամ երբ իրեն չեն լսում։ Ղարաբաղի պրոբլեմի արմատները պետք է փնտրել 11-րդ դարում, երբ Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայ ժողովրդի բոլոր հատվածները ըսկսեցին հերոսաբար պայքարել միասնական հայրենիք ստեղծելու համար։

Իհարկե, հարցի լուծման համար գործադուլները չպետք է դիտել որպես քաղաքական պայքարի միակ ձև։ Առավել ևս Հայաստանում, ուր ազգակործան երկրաշարժի հետևանքների վերացմանը իրենց նպաստն են բերում մեր երկրի բոլոր ժողովուրդները և աշխարհի բազմաթիվ պետություններ։ Նման պայմաններում գործադուլը կնշանակեր յուրօրինակ երախտամոռություն, եթե չասենք՝ ծանր հարված ինքներս մեզ։ Բայց, իմ խորին համոզմամբ, պետք է խորամուխ լինել գործադուլներ ծնող պատճառների մեջ, որպեսզի դրանք չունենան ծանր, ողբերգական հետևանքներ, ընդհանրապես մերժվեն։ Վերևում ես շեշտեցի, որ ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացումը անհնարին է առանց խնդրի քաղաքական (կրկնում եմ՝ ոչ թե վարչական) լուծման։ Միակ ճիշտ ուղին մարզի վերամիավորումն է մայր հայրենիքի՝ Հայկական ԽՍՀ-ի հետ. սա է ճշմարտությունը։ Այդպիսի լուծումը միայն ռեգիոնում կստեղծի կայուն իրավիճակ։

— Ընկեր Գրիգորյան, անցյալ տարվանից սկսած բավականին մեծացավ Լեռնային Ղարաբաղում «Երեկոյան Երևան» թերթի բաժանորդների թիվը։ Ինչի՞ արգասիք է դա։ Ձեր կարծիքով, ինչպե՞ս է թերթը լուսաբանել արցախյան շարժումն ու նրա պատմությունը։

— Կպատասխանեմ միանգամայն անկեղծ։ Ես շատ ուրախացա, երբ անցյալ տարվա մարտի 18-ին «Երեկոյան Երևան» թերթում տպագրված տեսա ԼՂԻՄ մարզկոմի մարտի 17-ի պլենումի որոշումը, որը հավանություն էր տվել փետրվարի 20-ի մարզային խորհրդի նստաշրջանի ընդունած որոշմանը. միաժամանակ ծավալուն ինֆորմացիա՝ մարզի դրության վերաբերյալ։ Դա մեծապես օգնեց ցրելու յոթ տասնամյակների հավիտենական թվացող այն մառախուղը, որն իրարից բաժանում էր նույն հայրենիքի երկու տարբեր հատվածները։ Դրանից հետո թերթը մեկը մյուսի հետևից տպագրեց հոդվածներ, որոնք ճշմարտացիորեն են մեկնաբանում Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը, նրա գիտական պատմությունը, սումգայիթյան ոճրագործների խեղկատակ դատավարությունը։ Երկրամասի հայության վրա մեծ տպավորություն են թողել մասնավորապես հրապարակախոս Ա. Հովհաննիսյանի «Երբ է ավարտվելու այս մղձավանջը», «Պրովոկացիա», պրոֆեսորներ Լ. Սիմոնյանի և Լ. Խուրշուդյանի «Ստալինը և հայկական հարցը», պրոֆ. Հ. Կարապետյանի «Արցախ. 1918—1920 թթ.» և շատ ու շատ ուշագրավ հոդվածներ, որոնք ճշմարտացիորեն են արտացոլում հարցի իրական պատմությունը։

Ցավով եմ նշում, որ տպագրված հոդվածներին օբյեկտիվ պատճառներով հնարավորություն չունեցան ծանոթանալու ռուս և մյուս ազգության ընթերցողները, որպեսզի բարձրացնեին իրենց անաչառ խոսքը, որը մենք զգում ենք օդի ու ջրի պես։

Ցանկացած թերթ կարող է ձեռք բերել հեղինակություն, և ժողովուրդը նրա մասին կարող է ասել դրական խոսք այն ժամանակ, երբ նա ծառայի իր կուսակցական կոչմանը՝ ցույց տալ ճշմարտությունը, արտահայտել հասարակական կարծիքը։ Հիմնականում սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ ԼՂԻՄ-ում ստվարացել է «Երեկոյան Երևան» թերթի բաժանորդների թիվը։ Օգտվելով ընձեռված հնարավորությունից, արցախցիների անունից խորին շնորհակալություն եմ հայտնում թերթի խմբագրությանը։ Կցանկանայի, որ այսուհետ ևս թերթը սիստեմատիկ կերպով անդրադառնար Ղարաբաղում կատարվող իրադարձություններին՝ դրանց տալով ճիշտ գնահատական, տպագրեր օպերատիվ լուրեր և տեղեկություններ արցախահայության կյանքից։ Խոսքը ուժ է, և այդ ուժը միշտ պետք է ծառայի ճշմարտությանը։ Դրանով նա ծառայած կլինի նաև վերակառուցման մեծ գործին։

«Երեկոյան Երևան» թերթի հանձնարարությամբ հարցազրույցը վարեց Հայկական ԽՍՀ-ում «Արցախ» ամսագրի արտահաստիքային թղթակից

ԳԱԳԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԸ

Խմբագիր՝ Կ. Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ ԿԻՐԱԿԻ

18— Կինոծրագիր՝ «Ճանաչումն է ծնում բարեկամությունը»։ Հեռուստատեսային վավերագրական կինոնկար՝ «Մինաս Ավետիսյան» («Երևան» ստուդիա)։ 18.30— Կիրակնօրյա համերգային ծրագիր։ 19— Միջազգային համայնապատկեր (Մ.)։ 19.45— Ազգի 20— Լրաբեր։ 20.30— Հայկական

առաջին անգամ. «Մենավոր ընկուզենին»։ 22— ԺԱՄԱՆԱԿ (Մ.)։ 22.40— Երաժշտական փառատոն

ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

18— Մուլտիպլիկացիոն կինոնկար՝ «Մեր բարեկամ Միխայ[illegible]վան»։ 18.10— Հեռուստատեսային գեղարվեստական կինոնկար՝ «Տրուֆալդինոն Բերգամոյից» (2-րդ սերիա)։ 19.15— Երևանը և երևանցիները։ 20— Հեռուստատեսային վավերագրական կինոնկար՝ «Երթային փորձարկումներ»։ 20.30—